ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

23 օգոստոսի 2018 թվականի N 137-Ա

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված N 1 հավելվածի 3-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալի 2018 թվականի հուլիսի 19-ի N 03/27-3/13180-18 գրությունը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ ***Կոմիտաս Հունանյանին*** 2018 թվականի օգոստոսի 27-ից մինչև օգոստոսի 31-ը ներառյալ, հինգ օրով գործուղել քաղաք Երևան՝ *«Մաւրեր Սթայլ»* սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ուսումնական կենտրոն *«Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստում»* դասընթացին մասնակցելու համար:

2. ***Կոմիտաս Հունանյանի*** գործուղման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ ***Արամ Գրիգորյանի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թվականի օգոստոսի 23
ք. Հրազդան